ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

PKF

«ԿՐԵԴԻՏ ԿՈՐՊ» ՈՒՎԿ ՓԲԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2022թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

PKF

ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 9/5, 2-րդ հարկ, տարածք 9, Հեռ.՝ +37411-577-544,
էլ. հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբկայք՝ www.pkfarmenia.com

PKF

Անկախ Աուդիտորական եզրակացություն

«ԿՐԵԴԻՏ ԿՈՐՊ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

ԿԱՐԾԻՔ

Մեր կողմից իրականացվել է «ԿՐԵԴԻՏ ԿՈՐՊ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝այդ պահանջների համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

ԱՅԼ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Ընկերության 2021թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտը իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որը 2022թ.-ի հունիսի 10-ին արտահայտել է չճնաափոխված կարծիք:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածներից:

Կառավարման օրգաններում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

ԱՈՒԴԻՏՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար:
  Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ՝ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարված հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա՞ է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ

գոյություն ունի էական անորոշություն, պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Ընկերությունը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյո՞ք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Ք. Երևան, 16.06.2023թ.

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

Գլխավոր տնօրեն Գոռ Դավթյան

Որակավորված աուդիտոր Անահիտ Միրզոյան

«ԿՐԵԴԻՏ ԿՈՐՊ» ՈՒՎԿ ՓԲԸ

2022թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	2
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	3
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	4
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	5
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԵԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	7

«ԿՐԵԴԻՏ ԿՈՐՊ» ՈՒՎԿ ՓԲԸ

2022թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հազար դրամ	Ծնթ.	2022թ.	2021թ.
Տոկոսային եկամուտներ		141,558	136,145
Տոկոսային ծախսեր		(38,373)	(45,959)
Զուտ տոկոսային եկամուտներ	**4**	**103,185**	**90,186**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ		70	13,547
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		(336)	(648)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ	**5**	**(266)**	**12,899**
Փոխարժեքային տարբերություններից օգուտ/(վնաս)	6	(97,308)	(27,874)
Այլ գործառնական եկամուտներ	6	6,226	8,555
Այլ գործառնական ծախսեր	6	(738)	(590)
Գործառնական եկամուտ		**11,099**	**83,176**
Հաճախորդներին տրված վարկերի (արժեզրկումից կորուստներ)/արժեզրկման վերականգնում	7	75,642	4,217
Դեբիտորական պարտքերի արժեզրկման հակադարձում		1,224	1,954
Անձնակազմի գծով ծախսեր	8	(59,644)	(57,642)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	9	(57,028)	(50,687)
Այլ եկամուտներ	13	14,553	-
Շահույթ / (վնաս) մինչև հարկումը		**(14,154)**	**(18,982)**
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	10	(4,835)	(3,029)
Շահույթ / (վնաս) հարկումից հետո		**(18,989)**	**(22,011)**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Համապարփակ ֆինանսական արդյունք		**(18,989)**	**(22,011)**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2023 թվականի հունիսի 16-ին: Կից ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Գործադիր տնօրեն՝ **Բագրատ Մուշեղյան**

Գլխավոր հաշվապահ՝ **Վահե Գրիգորյան**

«ԿՐԵԴԻՏ ԿՈՐՊ ՈՒՎԿ» CREDIT CORP ULO» 01848137

«ԿՐԵԴԻՏ ԿՈՐՊ» ՈՒՎԿ ՓԲԸ

2022թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հազար դրամ	Ծնթ.	31.12.2022թ.	31.12.2021թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11	847	1,857
Հաճախորդներին տրված վարկեր	12	917,542	923,586
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով		329	329
Վաճառքի համար մատչելի ակտիվներ		-	-
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	13	10,559	5,091
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	14	13,732	30,210
Հետաձգված հարկային ակտիվ	15	16,737	18,838
Այլ ակտիվներ		9,677	5,136
Ընդամենը ակտիվներ		**969,423**	**985,047**
Պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	16	477,639	456,446
Հետաձգված հարկային պարտավորություններ		-	-
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	14	16,937	35,410
Այլ պարտավորություններ և պահուստներ	17	15,932	15,287
Ընդամենը պարտավորություններ		**510,508**	**507,143**
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	18	600,000	600,000
Լրացուցիչ կապիտալ		4,136	4,136
Կուտակված շահույթ / (վնաս)		(145,221)	(126,232)
Ընդամենը սեփական կապիտալ		**458,915**	**477,904**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**969,423**	**985,047**

Գործադիր տնօրեն՝ **Բագրատ Մուշեղյան**

Գլխավոր հաշվապահ՝ **Վահե Գրիգորյան**

«ԿՐԵԴԻՏ ԿՈՐՊ ՈՒՎԿ» «CREDIT CORP ULC» 01848137

«ԿՐԵԴԻՏ ԿՈՐՊ» ՈՒՎԿ ՓԲԸ

2022թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հազար դրամ	Բաժնետիրական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Չբաշխված շահույթ (չծածկված վնաս)	Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ. (վերաներկայացված)	**600,000**	**2,458**	**(104,221)**	**498,236**
Շահույթ / (վնաս) հարկումից հետո	-	-	(22,011)	**(22,011)**
Կապիտալի համալրում (գործարքներ սեփականատերերի հետ)	-	1,679	-	**1,679**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**600,000**	**4,136**	**(126,232)**	**477,904**
Շահույթ / (վնաս) հարկումից հետո	-	-	(18,989)	**(18,989)**
Կապիտալի համալրում (գործարքներ սեփականատերերի հետ)	-	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**600,000**	**4,136**	**(145,221)**	**458,915**

Գործադիր տնօրեն՝ **Բագրատ Մուշեղյան**

Գլխավոր հաշվապահ՝ **Վահե Գրիգորյան**

«ԿՐԵԴԻՏ ԿՈՐՊ ՈՒՎԿ» «CREDIT CORP ULC» 01848137

«ԿՐԵԴԻՏ ԿՈՐՊ» ՈՒՎԿ ՓԲԸ

2022թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հազար դրամ	2022թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	
Ստացված տոկոսներ	134,193
Վճարված տոկոսներ	(37,128)
Ստացված կոմիսիոն գումարներ	9,134
Վճարված կոմիսիոն գումարներ	(336)
Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ/(վնաս)	2,656
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(59,638)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր	(24,976)
Վճարված շահութահարկ	(65)
Դրամական միջոցների զուտ հոսքեր մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	**23,841**
Գործառնական ակտիվներում նվազում/(ավելացում)	(102,375)
Գործառնական պարտավորությունների ավելացում/(նվազում)	411
Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից	**(101,964)**
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**(78,123)**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(219)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում	2,494
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**2,275**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	
Բանկերից ստացված վարկերի ավելացում/(նվազում)	153,533
Ստացված փոխառությունների ավելացում/(նվազում)	(57,302)
Վարձակալության գծով գումարների ավելացում/(նվազում)	(21,600)
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**74,631**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	**(1,217)**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	207
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	**1,857**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	**847**

Ընկերությունը իր 2022թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ "Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքերի մասին տեղեկատվությունը ներկայացրել է՝ օգտագործելով ուղղակի մեթոդը՝ ի տարբերություն 2021թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաստատագրված տեղեկատվության, որը ներկայացրել է՝ օգտագործելով անուղղակի մեթոդը:

«ԿՐԵԴԻՏ ԿՈՐՊ» ՈՒՎԿ ՓԲԸ

2022թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հազար դրամ	2021թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	
Տարված շահույթ/(վնաս)	**(22,011)**
Ճշգրտումներ՝	
Մաշվածություն և ամորտիզացիա	28,577
Արժեզրկման պահուստների գծով զուտ շարժ	(4,217)
Զուտ փոփոխություններ հաշվեգրված տոկոսագումարներում	8,748
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	3,029
Հաշվեգրված տոկոսներ	40,825
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	27,874
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	**82,825**
Հաճախորդներին տրված վարկերի աճ	107,663
Այլ ակտիվների աճ/(նվազում)	21,788
Այլ պարտավորությունների փոփոխություն	1,658
Գործառնական գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) դրամական միջոցներ	**213,934**
Վճարված տոկոսներ	(39,001)
Գործառնական գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	**174,933**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(731)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում	-
Ներդրումային գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	**(731)**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	
Ստացված վարկեր և փոխառություններ	1,517,246
Վարկերի և փոխառությունների մարում	(1,677,715)
Վարձակալության գծով կրեդիտորական պարտքի մարում	(21,600)
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**(182,069)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	**(7,867)**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(1,093)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	**10,817**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	**1,857**

Գործադիր տնօրեն՝ **Բագրատ Մուշեղյան**

Գլխավոր հաշվապահ՝ **Վահե Գրիգորյան**

«ԿՐԵԴԻՏ ԿՈՐՊ ՈՒՎԿ» «CREDIT CORP ULC» 01168137

«ԿՐԵԴԻՏ ԿՈՐՊ» ՈՒՎԿ ՓԲԸ

2022Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Կրեդիտ Կորպ» ռնիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ), որպես փակ բաժնետիրական ընկերություն, որի 100% բաժնետոմսերը պատկանում են ՀՀ քաղաքացի Վարդան Վարդանյանին: Ընկերության գործունեությունը կարգավորվում է ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից: Ընկերությունն իր գործունեությունը իրականացնում է 2010թ-ի նոյեմբերի 9-ին տրված N 36 արտոնագրի հիման վրա:

Ընկերությունը զբաղվում է վարկավորմամբ և տրամադրում է սպառողական, հիպոթեքային և առևտրային վարկեր, ինչպես նաև իրականացնում է «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով թույլատրվող այլ գործունեություն, որը ներկայացված է ստորև՝

- Ներգրավել փոխառություններ և (կամ) կնքել նմանատիպ գործարքներ, բացառությամբ հրապարակային օֆերտաների միջոցով միջոցների ներգրավման,
- Տրամադրել փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ,
- Տրամադրել երաշխիքներ,
- Մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորագրային) կառավարում,
- Գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի և ստանդարտացված ծուզակտորներ և մետաղադրամ,
- Մատուցել ֆինանսական խորհրդատվություն՝ իրականացնել տնտեսության ոլորտների շուկաների վերլուծություն, կազմել բիզնես ծրագրեր և այլն,
- Գնել ու վաճառել արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ,
- Ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, աժեթներ և այլ արժեքներ,
- ՀԿ ԿԲ հանձնարարությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված այլ գործառնություններ:

Վարկերը տրամադրվում են ինչպես տեղական արժույթով, այնպես էլ արտարժույթով:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք Երևան, Բուզանդի 7-11:

2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ՀՀ-ում ունի 1 գրասենյակ (2021թ.-ի դեկտեմբերի դրությամբ՝ 1):

2. Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ) հանձնարարությամբ՝ ըստ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից հրապարակման:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով՝ բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական ֆունկցիոնալ արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կայուն գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 19-ում:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Ընդհանուր դրույթներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ների) համաձայն:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները կիրառվել են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Էական հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները, որոնք կիրառվել են ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ներկայացված են ստորև:

3.2 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս՝ Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքները.

Արտարժույթի տեսակ	ՀՀ ԿԲ-ի հաշվարկային փոխարժեքը	
	31.12.2022թ.-ի դրությամբ	31.12.2021թ.-ի դրությամբ
1 ԱՄՆ դոլար	393.57 ՀՀ դրամ	480.14 ՀՀ դրամ
1 ԵՎՐՈ	420.06 ՀՀ դրամ	542.61 ՀՀ դրամ

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած

փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում: Նման ոչ դրամային հոդվածների դեպքում շահույթի կամ վնասի ցանկացած փոխարժեքային բաղադրիչ նույնպես ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ֆինանսական հաշվետվությունների վերանկուցացումն այլ արժույթով

Ընկերության ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են դրամից՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Եկամտային և ծախսային հոդվածները վերահաշվարկվում են՝ օգտագործելով ժամանակաշրջանի միջին փոխարժեքը: Փոխարժեքային տարբերությունների արդյունքը գրանցվում է անմիջապես այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և կրեդիտագրվում է սեփական կապիտալին՝ արտարժույթի վերագնահատման պահուստում:

3.3 Հիմնական միջոցներ

Սկզբնական արժեքով հաշվառվող հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Հիմնական միջոցների սկզբնական արժեքը ընդգրկում է այդ ակտիվների ձեռքբերման գները, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը, տեղակայման հետ կապված ծախսումները և պարտադիր այլ վճարները, որոնք ենթակա չեն Ընկերությանը վերադարձման, ինչպես նաև ակտիվները իրենց նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած ծախսումները: Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության: Վարձակալական գույք հանդիսացող շենքերը նույնպես ընդգրկվում են հիմնական միջոցներում, եթե դրանք ստացվել են ֆինանսական վարձակալությամբ: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում (որը որոշվում է համեմատելով սեփական համանման ակտիվների հետ) կամ վարձակալության ժամկետի ընթացքում եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացվում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Գույք և տարբավորումներ	**8 տարի**
Տրանսպորտային միջոցներ	**8 տարի**
Վարձակալված գույքի բարելավումներ	**10 տարի**

3.4 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները: Ամորտիզացիան ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է՝

Համակարգչային ծրագրեր 10 տարի

3.5 Վարձակալված ակտիվներ

Ընկերությունը նախ և առաջ գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում կամ պարունակում է վարձակալություն: Այսինքն, եթե պայմանագրով իդենտիֆիկացվող ակտիվի օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածով փոխանցվում է փոխհատուցման դիմաց:

Ընկերությունը որպես վարձակալ

Ընկերությունը կիրառում է միանման մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալության: Ընկերությունը ճանաչում է պարտավորություն վարձակալության վճարները՝ Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով, որպեսզի վճարի վարձավճարները և Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները, որը իրենից ներկայացնում է տվյալ ակտիվի օգտագործման իրավունքը:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Ընկերությունը օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ճանաչում է վարձակալության սկզբում (այսինքն՝ այն ամսաթվով, երբ տվյալ ակտիվը մատչելի է օգտագործման համար): Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, և ճշգրտվում են կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով պարտավորության վերաչափումից: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է պարտավորություններում ճանաչված կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով արժեքը, առաջացող սկզբնական ուղղակի ծախսումները և վարձավճարները, որոնք կատարվել են մինչև վարձակալությունը սկսելու ամսաթիվը կամ այդ ամսաթվին կատարված վարձավճարները, հանած վարձակալության գծով ստացված ցանկացած արտոնություններ կամ զեղչեր: Այն դեպքում, երբ վարձակալած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության պայմանագրի ավարտին՝ վերջում, անցնում է Ընկերությանը կամ սկզբնական արժեքը արտացոլում է տվյալ վարձակալած ակտիվի գնման օպցիոն, ապա մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի գնահատված օգտակար ծառայության ժամկետով: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները նույնպես պետք է արժեզրկման ստուգման (թեստ) ենթարկվեն:

Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով

Վարձակալության սկզբան պահին, Ընկերությունը կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով չափում է վարձակալության ժամանակահատվածի ընթացքում կատարված կամ կատարվելիք վարձավճարների իրական արժեքով: Վարձավճարները ներառում են՝ հաստատուն՝ ֆիքսված վճարները (ներառյալ հաստատուն վճարումները), հանած վարձակալության հետ կապված ցանկացած ստացվելիք խրախուսումներ, վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և որոնք սկզբնապես չափվել են՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույքը և գումարները, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձակալության վճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գինը, եթե վարձակալը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումները, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է վարձակալի՝ վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը:

Փոփոխուն վարձավճարները, որոնք կախված չեն որևէ ինդեքսից կամ տոկոսադրույքներից (ներառում են, օրինակ՝ վճարումներ՝ կապված սպառողական գների ինդեքսից, վճարումներ՝ կապված ուղենշային տոկոսադրույքից (ինչպես օրինակ՝ LIBOR-ը), ճանաչվում են ծախս այն ժամանակաշրջանում, որում այդ դեպքերը տեղի են ունեցել:

Վարձավճարների իրական արժեքը հաշվարկելիս, Ընկերությունը կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը վարձակալության սկզբի առնչությամբ, որովհետև վարձակալության պայմանագրի մեջ ենթադրյալ տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշվել: Վարձակալության սկսելուց հետո կրեդիտորական

պարտքերը վարձակալության գծով ավելանում են (աճում են)՝ տոկոսների ավելացումով պայմանավորված, և նվազում են վարձավճարների վճարումով: Բացի դրանից, կոնդիտորական պարտքեր վարձակալության գծով հոդվածի հաշվեկշռային արժեքը վերանայվում է, եթե առկա է ձևափոխություն, փոփոխություն, փոփոխություն վարձակալության ժամանակահատվածում, փոփոխություն վարձավճարում կամ տվյալ ակտիվի ձեռք բերման օպցիոնի գնահատման փոփոխություն: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է՝

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ 5 տարի

3.6 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած հանձնման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ), և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.7 Ֆինանսական գործիքներ

Այս ծանոթագրությունը տեղեկատվություն է տալիս Ընկերության ֆինանսական գործիքների վերաբերյալ, ներառյալ՝

- Ընկերության բոլոր ֆինանսական գործիքների ներկայացումը
- Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են Ընկերության ֆինանսական վիճակի վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքների պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով: Գործարքի հետ կապված ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը կամ թողարկմանը (բացառությամբ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների) նախնական ճանաչման ժամանակ համապատասխանաբար գումարվում կամ պակասեցվում են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքից: Իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսերը անմիջապես ճանաչվում են շահույթ կամ վնասում:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը

- Ֆինանսական ակտիվներ ամորտիզացված արժեքով չափվող
- Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՀԱՀՖԱ)
- Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող (ԻԱՇՇՎ)

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը

- Ֆինանսական պարտավորություններ ամորտիզացված արժեքով չափվող
- Ֆինանսական պարտավորություններ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՀԱՀՖԱ)

«ԿՐԵԴԻՏ ԿՈՐՊ» ՈՒՎԿ ՓԲԸ

2022թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

Ֆինանսական ակտիվներ ամորտիզացված արժեքով չափվող

Պարտքային գործիքները, որոնք համապատասխանում են հետևյալ պայմաններին, սկզբնական ճանաչումից հետո չափվում են ամորտիզացված արժեքով, այն դեպքում, երբ.

- ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները պայմանագրային դրամական հոսքեր հավաքագրելու համար, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հատուկ օրերին ավելացնում են դրամական հոսքերը, որոնք պարզապես մայր գումարի և տոկոսագումարների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՀԱՀՖԱ)

- ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է ապահովել պայմանագրային դրամական միջոցների հոսքեր և պահվում են վաճառքի նպատակով, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հատուկ օրերին ավելացնում են դրամական հոսքերը, որոնք պարզապես մայր գումարի և տոկոսագումարների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող (ԻԱՀՇՎ)

Մնացած բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք չեն ներառվում վերոնշյալների մեջ, ինքնաբերաբար չափվում են իրական արժեքով շահույթ կամ վնասի միջոցով (ԻԱՀՇՎ):

Ֆինանսական պարտավորություններ ամորտիզացված արժեքով չափվող

Բոլոր ֆինանսական պարտավորությունները, սկզբնական ճանաչումից հետո, չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը կամ ԻԱՀՇՎ մեթոդը: Այնուամենայնիվ, ֆինանսական պարտավորությունները, որոնք առաջանում են, երբ ֆինանսական ակտիվի փոխանցումը չի համապատասխանում ապաճանաչմանը կամ երբ շարունակական ներգրավվածության մոտեցում է կիրառվում և Ընկերության կողմից, թողարկված ֆինանսական երաշխիքի պայմանագրերը չափվում են ստորև նշված հաշվառաբանական հաշվառման քաղաքականություններին համապատասխան՝

Ֆինանսական պարտավորություններ (ԻԱՀՇՎ) ներկայացվող

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ԻԱՀՇՎ ներկայացվող, երբ ֆինանսական պարտավորությունը հանդիսանում է՝ (ա) ձեռնարկատիրական գործունեության միավորման մեջ ձեռք բերողի պայմանական հատուցումը (բ) պահվում է առևտրային նպատակով կամ (գ) այն նախատեսված է ԻԱՀՇՎ-ի համար:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես առևտրային նպատակով պահվող եթե.

- այն բացառապես ձեռք է բերվել մոտ ապագայում վերավաճառքի նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման ժամանակ այն հանդիսանում է իդենտիֆիկացվող ֆինանսական գործիքների մի մաս, որը Ընկերությունը միասին է կառավարում և ունի կարճաժամկետ շահույթ ստանալու փաստ:
- Այն ածանցյալ գործիք է, բացառությամբ այն ածանցյալ գործիքների, որոնք հանդիսանում են ֆինանսական երաշխիքի պայմանագրեր կամ նախանշված արդյունավետ հեջավորման գործիքներից:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը

Կազմակերպությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը միայն երբ ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները սպառվում են կամ երբ այն փոխանցում է ֆինանսական ակտիվը և էականորեն ակտիվի սեփականության բոլոր ռիսկերն ու հատույցները մեկ այլ կազմակերպության: Եթե Կազմակերպությունը ոչ

փոխանցում է, և ոչ էլ պահպանում սեփականության հետ կապված էականորեն բոլոր ռիսկերն ու հատույցները և շարունակում է վերահսկել փոխանցված ակտիվը, ապա Կազմակերպությունը ճանաչում է իր հետաքրքրությունը ակտիվի հանդեպ և այն գումարների հետ կապված պարտավորությունը, որն այն կարող է վճարել: Եթե Կազմակերպությունը կրում է փոխանցված ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերը և հատույցները, ապա Կազմակերպությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև ճանաչում է ստացված օգուտների գրավադրված փոխառությունները:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի ապաճանաչման ժամանակ ակտիվի մնացորդային արժեքի և հատուցված կամ հատուցվող գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթ կամ վնասում: Ի հավելում, պարտքային գործիքի մեջ ներդրման, դասակարգված որպես «Իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող» (ԻԱՉՇՎ), ապաճանաչման ժամանակ ներդրումների վերագնահատման պահուստում նախկինում հաշվարկված կուտակային օգուտ կամ վնասը վերադասակարգվում է շահույթ կամ վնասում: Եվ հակառակը, բաժնային գործիքի մեջ ներդրման ապաճանաչման ժամանակ, որը սկզբնական ճանաչման ժամանակ Կազմակերպությունը ընտրել է ԻԱՉՇՎ մեթոդը ներդրումների վերագնահատման պահուստում նախկինում հաշվարկված կուտակային օգուտ կամ վնասը չի վերադասակարգվում շահույթ կամ վնասում, այլ տեղափոխվում է կուտակված շահույթ կամ վնաս:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը

Կազմակերպությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը միայն և միայն, երբ Կազմակերպությունը ֆինանսական գործիքի պարտավորություններից ազատվել է, չեղարկվել է կամ տպառվել է պայմանագրային պարտավորությունը: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության մնացորդային արժեքի և փոխհատուցված կամ փոխհատուցվող գումարի միջև տարբերությունը ճանաչվում է շահույթ կամ վնասում:

Երբ Կազմակերպությունը առկա վարկատուի հետ մեկ պարտքային գործիքը փոխանակում է մյուսի հետ՝ զգալիորեն տարբեր պայմաններով, ապա այսպիսի փոխանակումը դիտարկվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նույն կերպ, Կազմակերպությունը առկա պարտավորության կամ դրա մի մասի էական պայմանների փոփոխությունը դիտարկում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր պարտավորության ճանաչում: Ենթադրվում է, որ պայմանները էական տարբեր են համարվում, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքը, ներառյալ բոլոր վճարված վճարումների և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված և ստացված վճարումների տարբերությունը, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացորդային դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքից: Եթե փոփոխությունը էական չէ մինչև փոփոխությունը պարտավորության մնացորդային արժեքի և փոփոխությունից հետո դրամական հոսքերի ներկա արժեքի միջև, ապա տարբերությունը պետք է ճանաչվի շահույթ կամ վնասում այլ եկամուտների կամ վնասների հետ մեկտեղ, որպես փոփոխությունից շահույթ կամ վնաս:

Ֆինանսական գործիքների արժեզրկում

Պարտքային գործիքներում ներդրումների արժեզրկումից կորուստները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով կամ ԻԱՉԱՀԱ-ով, Կազմակերպությունը ճանաչում է հետևյալ դեպքերում՝ սպասվելիք վարկային կորուստների, ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքերի, առևտրային դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների գծով, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի պայմանագրերի մասով: «Դեբիտորական պարտքերի սպասվող կորուստների» (ԴՊՍԿ) գումարները, սկսած համապատասխան ֆինանսական գործիքի սկզբնական ճանաչումից, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին բարձրացվում են՝ վարկային ռիսկում փոփոխություններն արտացոլելու համար:

Կազմակերպությունը միշտ ճանաչում է ԴՊՍԿ-ը առևտրային դեբիտորական պարտքերի, պայմանագրային ակտիվների և ֆինանսական վարձակալությունից դեբիտորական պարտքերի համար: Այս ֆինանսական ակտիվներից սպասվող վարկային կորուստները գնահատվում են՝ օգտագործելով պահուստի հաշվարկման համար մշակված համապատասխան մատրիցան՝ հիմնվելով Կազմակերպության պատմական վարկային կորուստի փորձի վրա, ճշգրտված պարտապանների համար հատուկ գործոններով, ընդհանուր տնտեսական պայմաններով և ընթացիկ, ինչպես նաև հաշվետու ամսաթվի պայմաններին կանխատեսվող ուղղության գնահատմամբ, ներառյալ երբ կիրառելի է դրամի արժեքը ժամանակի մեջ:

Մյուս բոլոր ֆինանսական գործիքների համար, Կազմակերպությունը ճանաչում է ԴՊՍԿ- ն, երբ տեղի է ունեցել սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի զգալի աճ: Այնուամենայնիվ, եթե ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալի չի բարձրացել սկզբնական ճանաչումից ի վեր, ապա Կազմակերպությունը այդ ֆինանսական գործիքից կորուստի պահուստը չափում է 12 ամսվա ԴՊՍԿ-ի հավասարեք գումարով:

ԴՊՍԿ-ն իրենից ներկայացնում է սպասվող վարկային կորուստներ ֆինանսական գործիքի ամբողջ կյանքի ընթացքում հնարավոր դեֆոլտի արդյունքում: Եվ հակառակը, 12 ամսվա ԴՊՍԿ-ն իրենից ներկայացնում է կյանքի ընթացքում ԴՊՍԿ-ի այն մասը, որը սպասվում է որ կառաջանա ֆինանսական գործիքի հնարավոր դեֆոլտից հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում:

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվառահանման հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 20-ում:

3.8 Արժեզրկում

Վարկերի և դեբիտորական պարտքերի արժեզրկում

Կազմակերպությունը կանոնավոր կերպով վերանայում է իր վարկերը և դեբիտորական պարտքերը՝ դրանք արժեզրկման տեսանկյունից գնահատելու համար: Կազմակերպության վարկերի արժեզրկման պահուստները ձևավորվում են վարկերի և դեբիտորական պարտքերի պորտֆելում առաջացած արժեզրկումից կորուստները ճանաչելու համար: Կազմակերպությունը վարկերի և դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստին կատարվող մասհանումների վերաբերյալ գնահատականները դիտարկում է որպես գնահատման անորոշությունների հիմնական աղբյուր, որովհետև ա) դրանք բավականին զգայուն են մի ժամանակաշրջանից մյուսը տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ, քանի որ հիմնված են չվճարումների չափերի և ապագա կորուստների գնահատման վերաբերյալ ենթադրությունների հիման վրա, որոնք կատարվել են անցյալ գործունեության փորձի հիման վրա և բ) ցանկացած զգալի տարբերություն Կազմակերպության կողմից գնահատված կորուստների և դրանց փաստացի չափերի միջև կհանգեցնի անհրաժեշտության, որ Կազմակերպությունը գրանցի հավելյալ պահուստներ, որոնք կարող են ունենալ նշանակալի ազդեցություն երա ապագա ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Կազմակերպությունը կիրառում է անհատական և խմբային գնահատումների համադրություն՝ հաշվետու ամսաթվի դրությամբ արժեզրկման պահուստին մասհանումները որոշելիս:

Առանձին վերցրած նշանակալի վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք արժեզրկված չեն, ինչպես նաև բոլոր այն վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք անհատապես չեն գնահատվել, ներառվում են խմբային հիմունքով գնահատվող վարկերի և դեբիտորական պարտքերի մեջ: Խմբային հիմունքով գնահատվող վարկերը և դեբիտորական պարտքերը խմբավորվում են ըստ նմանատիպ վարկային ռիսկի բնութագրիչների և ժամկետայնության կարգավիճակի և գնահատվում համապատասխանաբար: Կազմակերպությունը ապագա դրամական հոսքերում փոփոխությունները գնահատում է՝ ելնելով նախկին ցուցանիշներից, հաճախորդների նախկին վարքագծից, տվյալ խմբի վարկառուների կողմից վճարումների կատարման իրավիճակի վատթարացման դիտարկելի տվյալներից, ինչպես նաև տնտեսական պայմաններից, որոնք առնչություն ունեն խմբի ակտիվների գծով պարտավորությունների չկատարման հետ: Ղեկավարությունն օգտագործում է գնահատականներ՝ ելնելով վնասների նախորդ փորձից այն ակտիվների գծով, որոնք ունեն վարկային ռիսկին բնորոշ հատկանիշներ և առկա է վարկերի խմբին համանման արժեզրկման հայտանիշ: Կազմակերպությունը հիմնվում է ղեկավարության դատողության վրա՝ վարկերի խմբի գծով դիտարկելի տվյալները ճշգրտելու համար այնպես, որ դրանք արտացոլեն պատմական տվյալներում չարտացոլված ընթացիկ հանգամանքները: Խմբային հիմունքով գնահատման մեթոդաբանության խնդիրն է՝ ապահովել, որ արժեզրկումից կորստի պահուստը արտացոլի կորստի պատճառ հանդիսացող իրադարձությունները, որոնք արդեն տեղի են ունեցել, սակայն դեռ չեն գնահատվել անհատական հիմունքով:

Ֆինանսական հաշվետվություններում ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահուստագոյացումը որոշվում է՝ ելնելով ներկա տնտեսական և քաղաքական հանգամանքներից: Կազմակերպությունը հնարավորություն չունի կանխատեսելու հանգամանքների փոփոխությունները Հայաստանում և դրանց հնարավոր ազդեցությունները ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստների պահուստի համարժեքության վրա ապագա ժամանակաշրջաններում:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Սեփական օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլիներին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես ենթադրյալ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ցուցաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է, և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ինչ վերաբերում է վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի արժեթղթերին, արժեզրկումից հետո իրական արժեքի աճն ուղղակիորեն ճանաչվում է սեփական կապիտալում:

3.9 Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ

Երբ Ընկերությունը մտադրություն ունի վաճառել ոչ ընթացիկ ակտիվներ կամ ակտիվների խումբ և երբ այդ վաճառքի տեղի ունենալը հավանական է 12 ամսվա ընթացքում, ապա ակտիվը կամ ակտիվների խումբը պետք է դասակարգվի և ներկայացվի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ որպես վաճառքի համար պահվող ակտիվներ:

Վաճառքի համար պահվող ակտիվները չափվում են ակտիվի՝ մինչև վերադասակարգումն ունեցած հաշվեկշռային արժեքից և «իրական արժեքի՝ հանած վաճառքի ծախսումներ»- ից՝ նվազագույնով: Այս ակտիվների գծով մաշվածություն չի հաշվարկվում: Այնուամենայնիվ, վաճառքի համար պահվող որոշ ակտիվներ, ինչպիսիք են ֆինանսական ակտիվները և հետաձգված հարկային ակտիվները, հաշվառվում են սովորականի պես:

Վաճառքի համար պահվող ակտիվների վաճառքից կամ վերագնահատումից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար «Այլ եկամուտ» կամ «Այլ ծախսեր» հոդվածներում: Վաճառքի դեպքում տվյալ ակտիվի գծով սեփական կապիտալում առկա վերագնահատման պահուստը վերագրվում է կուտակված շահույթին:

3.10 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.11 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի գնահատման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատականները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.12 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի առացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող շահույթի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

3.13 Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

Ընկերությունը առաջին անգամ ՖՀՄՍ 15. «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտը կիրառել է 2021թ. հունվարի 1-ից: Մի շարք նոր ընդունված ստանդարտներ նույնպես կիրառվել են Ընկերության կողմից 2021թ. հունվարի 1-ից, բայց դրանք նկատելի ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ընկերության կողմից նոր ընդունված ստանդարտներին անցման հետևանքով պահանջվող համադրելի ֆինանսական հաշվետվությունները չեն վերանայվել:

ՖՀՄՍ 15. «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտը սահմանում է համապարփակ մոտեցումներ հասույթի որոշման գծով, թե երբ հասույթը պետք է ճանաչվի և ինչ գումարով պետք է ճանաչվի: Սույն ստանդարտ փոխարինում է ՀՀՄՍ 18. «Հասույթ», ՀՀՄՍ 11. «Կառուցման պայմանագրեր» ստանդարտներին և համապատասխան մեկնաբանություններին: Համաձայն ՖՀՄՍ 15. «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտի, հասույթը ճանաչվում է, երբ գնորդը կամ ծառայություն ստացողը ձեռք է բերում վերահսկողություն ապրանքի կամ ծառայության նկատմամբ:
Վերահսկողության իրավունքի փոխանցման ժամկետի որոշումը, «ժամանակի կոնկրետ պահին», թե «ժամանակի ընթացքում», պահանջում է դատողություններ:

4. Տոկոսային եկամուտ և ծախս

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրված վարկեր	130,281	102,884
Բանկային հաշիվներ	18	33,261
Այլ	11,259	-
	141,558	**136,145**
Տոկոսային ծախս		
Ֆինանսական վարձակալության գծով տոկոսային ծախսեր	(3,127)	(5,134)
Ստացված վարկեր	(13,521)	-
Ստացված փոխառություններ	(21,725)	(40,825)
	(38,373)	**(45,959)**
	103,185	**90,186**

5. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ		
Վարկերի տրամադրումից սպասարկումից միջնորդավճարներ	70	13,547
	70	**13,547**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		
Բանկային ծառայությունների համար գանձված միջնորդավճարներ	-	-
Վճարված միջնորդավճարներ	(336)	(648)
	(336)	**(648)**
	(266)	**12,899**

6. Փոխարժեքային տարբերություններից օգուտ/(վնաս), գործառնական եկամուտներ/(ծախսեր)

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ/(վնաս)	(97,308)	(27,874)
Ստացված տույժեր և տուգանքներ	3,719	8,256
Այլ գործառնական եկամուտներ	2,507	1,230
Այլ գործառնական ծախսեր	(738)	(1,521)
	(91,820)	**(19,909)**

7. Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկումից կորուստներ (արժեզրկման վերականգնում)

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկում	(131,446)	(262,602)
Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկման վերականգնում	207,088	266,819
	75,642	**4,217**

8. Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Փոխհատուցումներ աշխատակիցներին	59,639	57,282
Այլ	5	360
	59,644	**57,642**

9. Այլ ընդհանուր վարչական ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Գովազդի և շուկայավարման ծախսեր	-	1,031
Գործառնական վարձակալության գծով ծախս	960	960
Վերանորոգման և պահպանման ծախսեր	10,206	5,991
Մաշվածություն և ամորտիզացիա	25,393	28,576
Հարկեր, տուրքեր՝ բացառությամբ շահութահարկի	6,075	5,752
Մասնագիտական ծառայություններ	1,152	2,464
Գրասենյակային ծախսեր	252	345
Ներկայացուցչական ծախսեր	104	503
Տույժեր ու տուգանքներ	9,000	-
Այլ ծախսեր	3,886	5,065
	57,028	**50,687**

10. Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Ընթացիկ տարվա հարկի գծով ծախս		-
Հետաձգված ակտիվների և պարտավորությունների շարժ՝ ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման արդյունքում	4,835	3,029
	4,835	**3,029**

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2022թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2021թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը (հաճախորդ ՖՀԱՄՍ-ի)	(14,154)		(18,982)	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2021թ.-ին՝ 18%)	2,548	(18.0)	3,417	(18.0)
(Չհարկվող եկամուտ)/չնպաստեցվող ծախսեր, զուտ	2,287	(16.2)	(388)	2.0
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	4,835	(34.2)	3,029	(16.0)

11. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	31.12.2022թ.	31.12.2021թ.
Կանխիկ միջոցներ	108	954
Բանկային հաշիվներ	739	903
	847	**1,857**

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն արժեզրկված, ժամկետանց կամ գրավադրված չեն, դրանց նկատմամբ չկան որևէ սահմանափակումներ: 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի բանկերում տեղաբաշխված այնպիսի միջոցներ, որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը:

12. Հաճախորդներին տրված վարկեր

Հազար ՀՀ դրամ	31.12.2022թ.	31.12.2021թ.
Բիզնես վարկեր		
Իրավաբանական անձինք	182,847	131,149
Անհատ ձեռնարկատերեր	33,244	61,361
	216,091	**192,510**
Անհատներին տրված վարկեր		
Հիպոթեքային վարկեր	689,545	701,629
Այլ սպառողական վարկեր	22,997	33,572
	712,542	**735,201**
	928,633	**927,711**
Արժեզրկման գծով պահուստ	(11,091)	(4,125)
	917,542	**923,586**

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը ըստ հաճախորդներին տրված վարկերի դասերի 2022թ. ընթացքում.

Հազար ՀՀ դրամ	Բիզնես վարկեր	Անհատներին տրված վարկեր	Ընդամենը
Մնացորդը տարեսկզբին	(146)	(3,979)	(4,125)
Զուտ (վերադարձնում)/ծախս	(2,389)	(4,577)	(6,966)
	(2,535)	(8,556)	(11,091)

«ԿՐԵԴԻՏ ԿՈՐՊ» ՈՒՎԿ ՓԲԸ

2022թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը ըստ հաճախորդներին տրված վարկերի դասերի 2021թ. ընթացքում.

Հազար ՀՀ դրամ	Բիզնես վարկեր	Անհատներին տրված վարկեր	Ընդամենը
Մնացորդը տարեսկզբին	(68,289)	(35,714)	(104,003)
Զուտ (վերականգնում)/նախս	68,143	31,735	99,878
	(146)	**(3,979)**	**(4,125)**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազար ՀՀ դրամ	Համախառն վարկեր	Արժեզրկման պահուստ	Զուտ վարկեր	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ (%)
Բիզնես վարկեր				
Իրավաբանական անձինք				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	182,847	(2,396)	180,451	1.31%
Անհատ ձեռնարկատերեր				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	33,244	(136)	33,108	0.41%
	216,091	**(2,535)**	**213,556**	**1,17%**
Անհատներին տրված վարկեր				
Հիփոթեքային վարկեր				
• ոչ ժամկետանց	684,807	(8,467)	676,340	1.24%
• 31-90 օր ժամկետանց	-	-	-	-
• 181-270 օր ժամկետանց	4,738	(26)	4,711	0.55%
	689,545	**(8,493)**	**681,052**	**1.23%**
Այլ սպառողական վարկեր	22,997	(63)	22,934	0.27%
• ոչ ժամկետանց		-		
	22,997	**(63)**	**22,934**	**0.27%**
	712,542	**(8,556)**	**703,986**	**1.20%**
	928,633	**(11,091)**	**917,542**	**1.19%**

«ԿՐԵԴԻՏ ԿՈՐՊ» ՈՒՎԿ ՓԲԸ

2022թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազար ՀՀ դրամ	Համախառն վարկեր	Արժեզրկման պահուստ	Զուտ վարկեր	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ (%)
Բիզնես վարկեր				
Իրավաբանական անձինք				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	131,149	(130)	131,019	0.10%
Անհատ ձեռնարկատերեր				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	61,361	(16)	61,345	0.03%
	192,510	(146)	192,364	0.08%
Անհատներին տրված վարկեր				
Հիպոթեքային վարկեր				
• ոչ ժամկետանց	624,691	(2,915)	621,776	0.47%
• 31-90 օր ժամկետանց	2,639	-	2,639	0.00%
• 181-270 օր ժամկետանց	74,298	(595)	73,703	0.80%
	701,628	(3,510)	698,118	0.50%
Այլ սպառողական վարկեր				
• ոչ ժամկետանց	33,573	(470)	33,102	1.40%
	33,573	(470)	33,102	1.40%
	735,201	(3,980)	731,220	0.54%
	927,711	(4,126)	923,584	0.44%

12.1 Վարկերի արժեզրկման գնահատման համար կիրառվող հիմնական ենթադրություններ և դատողություններ

Բիզնես վարկեր

Վարկերի արժեզրկումը տեղի է ունենում վարկի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի դեպքերի արդյունքում, որոնք ազդեցություն են ունենում վարկի հետ կապված դրամական միջոցների ապագա գնահատված հոսքերի վրա և որը կարելի է արժանահավատորեն գնահատել: Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկերի համար բացակայում է դրանց ռոդյակիորեն վերագրելի արժեզրկման անկողմնակալ վկայություն:

Բիզնես վարկերի արժեզրկման անկողմնակալ հայտանիշներ են հանդիսանում՝

- վարկային պայմանագրի ժամկետանց վճարները,
- վարկառուի ֆինանսական վիճակի էական վատթարացումը,
- տնտեսական միջավայրի վատթարացումը, բացասական փոփոխությունները վարկառուի շուկաներում:

Բիզնես վարկերի արժեզրկման գծով պահուստը գնահատելիս՝ Ընկերությունը հիմնվում է արժեզրկման առանձին հայտանիշ ունեցող վարկերի գծով դրամական միջոցների ապագա հոսքերի վերլուծության և արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկերի գծով վնաս կրելու իր նախկին փորձի վրա:

Անհատներին տրված վարկեր

Անհատներին տրված վարկերի գծով արժեզրկումը գնահատելիս՝ Ընկերությունը հիմնվում է վարկերի յուրաքանչյուր տեսակի գծով վնաս կրելու իր նախկին փորձի վրա:

Անհատներին տրված վարկերի գծով արժեզրկումից կորուստները որոշելիս՝ ղեկավարությունն առաջնորդվում է հետևյալ հիմնական ենթադրություններով.

- անհատներին տրված վարկերի գծով վնասի շարժի դրույքները կայուն են և կարող են գնահատվել վերջին 24 ամիսների ընթացքում կրած վնասի շարժի մոդելի հիման վրա,
- ավելի քան 271 օր ժամկետանց անհատներին տրված վարկերին բաժին է ընկնում 100% վնասի հավանականություն:

12.2 Գրավի վերլուծություն

Բիզնես վարկեր

Բիզնես վարկերը ենթակա են վարկային գնահատման և արժեզրկման ստուգման անհատական հիմունքով: Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդի ընդհանուր վճարունակությունը վերջինիս տրամադրված վարկի պարտքային որակի կարևոր ցուցանիշ է: Այնուամենայնիվ, գրավն ապահովում է լրացուցիչ ապահովվածություն, և Ընկերությունը, որպես կանոն, գրավ է պահանջում իրավաբանական անձանցից:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն բիզնես վարկերի համար ապահովություն ծառայող գրավի և ապահովության այլ միջոցների վերաբերյալ (առանց արժեզրկման)՝ ըստ գրավի տեսակների:

Վերը ներկայացված աղյուսակը բացառում է լրացուցիչ գրավի անհրաժեշտությունը:

Մի քանի տեսակի գրավներով ապահովված վարկերի համար բացահայտվում է այն գրավը, որն առավել եպատակահարմար է արժեզրկման գնահատման համար:

Ոչ ժամկետանց կամ ոչ արժեզրկված վարկերի փոխհատուցելիությունը հիմնականում կախված է վարկառուների վճարունակությունից, այլ ոչ՝ գրավի արժեքից, և Ընկերության համար պարտադիր չէ վերանայել գրավի գնահատումը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Անհատներին տրված վարկեր

Հիփոթեքային վարկերի դիմաց գրավադրվում է վարկի առարկա հանդիսացող անշարժ գույքը:

Ընկերությունը տրամադրում է սպառողական վարկեր ՀՀ դրամով՝ ապահովված եռաշխավորությամբ, անշարժ կամ շարժական գույքի գրավով, ինչպես նաև՝ առաջնային շուկայից մեքենաների ձեռքբերման վարկեր՝ ապահովված ձեռք բերված մեքենայի գրավադրմամբ:

Վարկերի համար ապահովություն հանդիսացող անշարժ գույքի իրական արժեքն առնվազն հավասար է վարկերի հաշվեկշռային արժեքին՝ հիմք ընդունելով վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ որոշված արժեքը:

Ընկերության քաղաքականության համաձայն՝ վարկերի գումարի և գրավի արժեքի հարաբերակցությունը սահմանվում է Ընկերության խորհրդի որոշմամբ:

«ԿՐԵԴԻՏ ԿՈՐՊ» ՈՒՎԿ ՓԲԸ

2022թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

Բոնազանձված գրավ

Ընկերության քաղաքականության համաձայն բռնագանձված գրավը ներառվում է վաճառքի համար պահվող ակտիվների կազմում և նման ակտիվները պետք է վաճառվեն հնարավորինս սեղմ ժամկետներում:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի բռնագանձված գրավ:
Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն բիզնես վարկերի համար ապահովություն ծառայող գրավի և ապահովության այլ միջոցների վերաբերյալ (առանց արժեզրկման)՝ ըստ գրավի տեսակների:

Հազար ՀՀ դրամ	31.12.2022թ.		31.12.2021թ.	
	Հաճախորդներին տրված վարկեր, հաշվեկշռային արժեք	Վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ գնահատված գրավի իրական արժեք	Հաճախորդներին տրված վարկեր, հաշվեկշռային արժեք	Վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ գնահատված գրավի իրական արժեք
Անշարժ գույք	792,215	4,149,610	860,414	3,558,410
Փոխադրամիջոցներ	4,951	51,900	5,431	63,360
Սարքավորումներ	-	218,460	-	218,460
Երաշխիքներ	9,818	328,644	12,567	184,748
Ընդամենը	**806,984**	**4,748,614**	**878,412**	**4,024,978**

12.3 Վարկային պորտֆելի աշխարհագրական և ըստ տնտեսության ճյուղերի վերլուծություն

Վարկերը տրամադրվել են Հայաստանի Հանրապետության հետևյալ մարզերում գտնվող հաճախորդներին.

Հազար ՀՀ դրամ	31.12.2022թ.		31.12.2021թ.	
	Վարկ	Տեսակարար կշիռ	Վարկ	Տեսակարար կշիռ
Երևան, ՀՀ	848,029	92.4%	880,382	94.9%
Արարատի մարզ, ՀՀ	4,411	0.5%	5,253	0.6%
Արմավիրի մարզ, ՀՀ	15,864	1.7%	22,943	2.5%
Գեղարքունիքի մարզ, ՀՀ	-	-	2,371	0.3%
Լոռու մարզ, ՀՀ	1,000	0.1%	206	0.0%
Կոտայքի մարզ, ՀՀ	48,238	5.3%	15,146	1.6%
Շիրակի մարզ, ՀՀ	-	-	-	0.0%
Վայոց Ձորի մարզ, ՀՀ	-	-	66	0.0%
Արագածոտնի մարզ, ՀՀ	-	-	1,236	0.1%
Արցախ	-	-	108	0.0%
	917,542	**100%**	**927,711**	**100%**
Արժեզրկման գծով պահուստ	(11,091)		(4,125)	
	928,633		**923,586**	

Վարկեր ստացած հաճախորդներն իրենց գործունեությունն իրականացնում են տնտեսության հետևյալ ճյուղերում.

Հազար ՀՀ դրամ	31.12.2022թ.	31.12.2021թ.
Առևտուր	44,629	58,3112
Շինարարություն	117,112	84,928
Առողջապահություն	-	-
Սպասարկում	74,104	31,198
Անհատներին տրված վարկեր	694,260	735,201
Այլ	12,563	18,072
	917,542	**927,711**
Արժեզրկման գծով պահուստ	(11,091)	(4,125)
	928,633	**923,586**

12.4 Վարկային ռիսկին ենթարկվածություն

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունն ունի 5 վարկառու (2021թ-ին՝ 2), որոնց տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 341,849 հազար դրամ (2021թ. -ին՝ 61,686 հազար դրամ):

12.5 Վարկերի ժամկետայնություն

Վարկային պորտֆելի ժամկետայնության վերլուծությունը ներկայացված ծանոթագրություն 12.1-ում, որտեղ արտացոլված է հաշվետու ամսաթվից մինչև վարկերի պայմանագրով նախատեսված մարման ժամկետն ընկած ժամանակահատվածը:

Վարկային պորտֆելի իրական ժամկետայնությունը կարող է զգալիորեն ավելի երկար լինել պայմանագրային պայմաններով հանձնառնեցված ժամկետայնությունից, քանի որ, հավանական է, որ որոշ վարկեր վերանայվեն ժամկետի ավարտից հետո:

13. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ

	Գույք և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Վարձակալված գույքի բարելավումներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
2021թ.-ի հունվարի 1-ի դրությամբ	**91,067**	**3,685**	**10,428**	**5,149**	**110,329**
Ավելացում	203	528	-	-	731
Օտարում	-	-	-	-	-
2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	**91,270**	**4,213**	**10,428**	**5,149**	**111,060**
Ավելացում	118	-	-	100	218
Օտարում	(3,011)	-	-	-	(3,011)
2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	**88,377**	**4,213**	**10,428**	**5,249**	**108,267**
Կուտակված մաշվածություն և արժեզրկում					
2021թ.-ի հունվարի 1-ի դրությամբ	**(79,044)**	**(1,365)**	**(9,133)**	**(4,330)**	**(93,871)**
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	(9,846)	(455)	(1,295)	(501)	(12,098)
Օտարման հետևանքով դուրսգրում	-	-	-	-	-
2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(88,890)**	**(1,820)**	**(10,428)**	**(4,831)**	**(105,969)**
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	(8,427)	(445)	-	(43)	(8,915)
Օտարման հետևանքով դուրսգրում	2,623	-	-	-	2,623
Հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված՝ նախորդ տարիների սխալների ուղղում	14,543	10	-	-	14,553
2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(80,151)**	**(2,255)**	**(10,428)**	**(4,874)**	**(97,708)**
Հաշվեկշռային արժեք					
2021թ.-ի հունվարի 1-ի դրությամբ	**12,023**	**2,320**	**1,295**	**819**	**16,458**
2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,380**	**2,393**	**-**	**318**	**5,091**
2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	**8,226**	**1,958**	**-**	**375**	**10,559**

Հիմնական միջոցների մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի հաշվարկված ծախսերը 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար, ամբողջությամբ՝ 8,915 հազար դրամ (2021թ.՝ 12,098 հազար դրամ), ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Այլ ընդհանուր վարչական ծախսեր» հոդվածում (տես՝ ծանոթագրություն՝9):

14. Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Ստորև ներկայացված է օգտագործման իրավունքով ակտիվների հաշվեկշռային արժեքը և ժամանակաշրջանի ընթացքում շարժը.

Հազար ՀՀ դրամ	Շենքեր և շինություններ	Ընդամենը
Սկզբնական արժեք		
2021թ.-ի հունվարի 1-ի դրությամբ	**46,689**	**46,689**
Ավելացում	-	-
Հաշվեկշռում տարվա մաշվածության ծախս	(16,479)	**(16,479)**
2021թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	**30,210**	**30,210**
Ավելացում	-	-
Հաշվեկշռում տարվա մաշվածության ծախս	(16,478)	**(16,478)**
2022թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	**13,732**	**13,732**

Ստորև ներկայացված է վարձակալության գծով պարտավորությունները (ներառյալ վարձավճարի գծով պարտավորությունները) և ժամանակաշրջանի ընթացքում փոփոխությունները.

Հազար ՀՀ դրամ	31.12.2022թ.	31.12.2021թ.
Սկզբնական մնացորդ	**35,410**	**51,876**
Ավելացում	-	-
Տոկոսների ավելացում	3,127	5,134
Վճարված վարձավճար	(21,600)	(21,600)
Տարվա վերջի դրությամբ	**16,937**	**35,410**
Ընթացիկ	16,937	18,473
Ոչ ընթացիկ	-	16,937
	16,937	**35,410**

Ստորև ներկայացված է շահույթում կամ վնասում ճանաչված գումարները.

Հազար ՀՀ դրամ	31.12.2022թ.	31.12.2021թ.
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների մաշվածություն	16,478	16,479
Տոկոսային ծախսեր վարձակալության գծով	3,127	5,134
	19,605	**21,613**

15. Հետաձգված հարկեր

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Տարեսկզբի մնացորդ	18,838	22,237
Շահույթում կամ վնասում ճանաչված (ծախս)/փոխհատուցում (տես՝ ծանոթագրություն 10)	(4,835)	(3,029)
Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված	2,734	(369)
Տարեվերջի մնացորդ	**16,737**	**18,838**

16. Վարկեր և փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	31.12.2022	31.12.2021
Վարկեր	281,974	298,000
Փոխառություններ	195,665	158,511
	477,639	**456,446**

Փոխառություններն ունեն 2-5 տարի մարման ժամկետ և տարեկան 7% միջին տոկոսադրույք ԱՄՆ դոլարի դեպքում (2021թ.՝ 7% տոկոսադրույք) և տարեկան 12% միջին տոկոսադրույք ՀՀ դրամի դեպքում (2021թ.՝ 12% տոկոսադրույք) :

Իրական արժեքը հաշվարկվում է՝ գնահատելով դրամական միջոցների հոսքերը ՀՀ դրամի դեպքում՝ 10.9%, ԱՄՆ դոլարի դեպքում՝ 8.0% (2021թ.՝ ՀՀ դրամի դեպքում՝ 10.9%, ԱՄՆ դոլարի դեպքում՝ 8.0%): Ընկերության տոկոսային և արտարժույթային ռիսկերի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 20-ում:

17. Այլ պարտավորություններ և պահուստներ

Հազար ՀՀ դրամ	31.12.2022	31.12.2021
Առևտրային կրեդիտորական պարտքեր	3,685	3,246
Պահուստներ	9,644	10,068
Հետաձգված եկամուտ	562	68
Վճարվելիք վարկեր և պարտավորություններ	1,903	1,718
Այլ	138	187
	15,932	**15,287**

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվառվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

18. Կապիտալ և պահուստներ

18.1 Բաժնետիրական կապիտալ

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Հայտարարված բաժնեմասեր		
600,000 սովորական բաժնետոմսեր, յուրաքանչյուրը 1,000 ՀՀ դրամ	600,000	600,000

	2022թ.		2021թ.	
Բաժնետեր	Բաժնեմասը (հազար դրամ)	Բաժնեմասի չափը (%)	Բաժնեմասը (հազար դրամ)	Բաժնեմասի չափը (%)
Վարդան Վարդանյան	600,000	100	600,000	100
	600,000	**100**	**600,000**	**100**

Ընկերությունն ունի սովորական բաժնետոմսերի մեկ դաս, որը հաստատուն եկամտի նկատմամբ իրավունք չունի:

18.2 Շահաբաժիններ

2022թ. և 2021թ. ընթացքում շահաբաժիններ չեն հայտարարվել և չեն վճարվել:

19. Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ գործոնների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

19.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Գնահատումները հիմնականում վերաբերվում են հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներին և չօգտագործված արձակուրդային պահուստին:

20. Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումն էական գործոն է վարկային կազմակերպությունների համար և Ընկերության գործառնությունների կարևոր տարր է: Հիմնական ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, կապված են շուկայական, վարկային և իրացվելիության ռիսկերի հետ:

20.1 Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարումը վերահսկող համակարգի պատշաճ աշխատանքի, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար:

Ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկման և իրականացման ու ռիսկերի համար սահմանված համապատասխան սահմանաչափերում Ընկերության գործունեությունն ապահովելու համար:

Ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման և համապատասխանության ապահովման համար, այն նաև վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման համար ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառումը: Ղեկավարությունն ուղղակիորեն հաշվետու է խորհրդին:

Վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերը՝ թե՛ պորտֆելի և թե՛ առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում ու վերահսկվում են Վարկային կոմիտեների համակարգի միջոցով:

Ռիսկի թե՛ արտաքին, թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են կազմակերպչական կառուցվածքի շրջանակներում: Ընկերությունը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների նպատակահարմարության աստիճանի որոշմանը:

Ստորև ներկայացված են ֆինանսական գործիքների կատեգորիաները.
Ֆինանսական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	31.12.2022թ.	31.12.2021թ.
Դրամական միջոցներ և համարժեքներ	847	1,857
Հաճախորդներին տրված վարկեր	917,542	923,586
Առևտրային դեբիտորական պարտքեր	-	-
	918,389	**925,443**

Ֆինանսական պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	31.12.2022թ.	31.12.2021թ.
Վարկեր և փոխառություններ	477,639	456,446
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	3,685	3,433
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	16,937	35,410
	498,261	**495,289**

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի, այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների և արտարժույթի փոխարժեքների տատանումների ազդեցությանը:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության ստանձնան ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Ընկերությունը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գծով գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են Կազմակերպության տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	2022թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		2021թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %	
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Տոկոսակիր ակտիվներ				
Հաճախորդներին տրված վարկեր	16.94%	15.86%	29.42%	16.34%
Պարտավորություններ				
Փոխառություններ	12.68%	7.23%	10.9%	8.0%

Արտարժույթի ռիսկ

Ընկերությունն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արտարժույթի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Ընկերության նկատմամբ: Ընկերությունը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր վարկային ռիսկը (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար) կառավարելու համար, ներառյալ պորտֆելի կենտրոնացվածության սահմանափակմանը վերաբերող ցուցումները և Վարկային կոմիտեի ստեղծումը՝ վարկային ռիսկն ակտիվորեն

վերահսկելու նպատակով: Ընկերության վարկային քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է խորհրդի կողմից:

Վարկային քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների դիտարկման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների (իրավաբանական անձանց և անհատների) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկային փաստաթղթերի պահանջները,
- վարկերի և այլ վարկային գործիքների շարունակական մոնիտորինգի ընթացակարգերը:

Վարկերի համար ներկայացվող դիմումները պատրաստվում են վարկավորման բաժնի համապատասխան աշխատակիցների կողմից, այնուհետև փոխանցվում են Վարկային կոմիտեին, որը պատասխանատու է վարկային պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության կառուցվածքային վերլուծության և ֆինանսական վիճակի ուսումնասիրության վրա: Վարկային կոմիտեն ուսումնասիրում և հաստատում է վարկի դիմումը:

Ընկերությունը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը:

Ընկերության վարկային ռիսկի առավելագույն մակարդակը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ֆինանսական ակտիվների և հաշվեկշռային արժեքներում չճանաչված պայմանագրային պարտավորություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա:

Ստորև ներկայացված է վարկային ռիսկին ֆինանսական ակտիվների ենթարկվածության առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ.

Հազար ՀՀ դրամ	31.12.2022թ.	31.12.2021թ.
Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները		
- Դրամական միջոցներ և համարժեքներ	847	1,857
- Հաճախորդներին տրված վարկեր	917,542	923,586
	918,389	**925,443**

Հաճախորդներին տրված վարկերի գրավի և այդ վարկերի գծով վարկային ռիսկի կենտրոնացվածության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 12.5-ում:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կարող է դժվարություններ ունենալ ֆինանսական գործիքների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում:

Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն:

Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը տիպական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել իրացվելիության ռիսկը:

«ԿՐԵԴԻՏ ԿՈՐՊ» ՈՒՎԿ ՓԲԸ

2022Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

Ընկերության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է խորհրդի կողմից:

Ընկերությունը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է բաժնետերերից, բանկերից և այլ վարկային կազմակերպություններից ստացված վարկերը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ ու հեշտությամբ բավարարելու նպատակով:
Հետևյալ աղյուսակում ներկայացված է Ընկերության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Կազմակերպությունը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

Ֆինանսական պարտավորությունների ժամկետային վերլուծություն.

2022թ.

Հազար ՀՀ դրամ						
	Պահանջ և մինչև 1 ամիս	**1-ից 3 ամիս**	**3-ից 6 ամիս**	**6-ից 12 ամիս**	**Ավելի քան 1 տարի**	**Ընդամենը**
Ոչ ածանցյալ պարտավորություններ						
Փոխառություններ և վարկեր	-	-	-	-	477,639	**477,639**
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	3,685	-	-	-	-	**3,685**
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	1,800	5,400	5,400	5,400	-	**18,000**
	5,485	**5,400**	**5,400**	**5,400**	**477,639**	**499,324**

2021թ.

Հազար ՀՀ դրամ						
	Պահանջ և մինչև 1 ամիս	**1-ից 3 ամիս**	**3-ից 6 ամիս**	**6-ից 12 ամիս**	**Ավելի քան 1 տարի**	**Ընդամենը**
Ոչ ածանցյալ պարտավորություններ						
Փոխառություններ	-	-	-	-	456,446	**456,446**
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	3,433	-	-	-	-	**3,433**
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	1,800	5,400	5,400	10,800	16,200	**39,600**
	5,233	**5,400**	**5,400**	**10,800**	**472,646**	**499,479**

20.2 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված իրական արժեքի չափումները

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված).
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ եկամտային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող).
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով եկամտային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի եկամտային տվյալներ):

Հազար ՀՀ դրամ		Իրական արժեքի չափման հիերարխիա		
Նկարագրություն	31.12.2022	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	847	847	-	-
Հաճախորդներին տրված վարկեր	917,542	917,542	-	-
	918,389	**918,389**		

Հազար ՀՀ դրամ		Իրական արժեքի հիերարխիայի չափում		
Նկարագրություն	31.12.2022	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Իրական արժեքով չափվող պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	477,639	-	477,639	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	3,685	3,685	-	-
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	16,937	-	-	16,937
	498,261	**3,685**	**477,639**	**16,937**

Հազար ՀՀ դրամ		Իրական արժեքի չափման հիերարխիա		
Նկարագրություն	**31.12.2021**	**Մակարդակ 1**	**Մակարդակ 2**	**Մակարդակ 3**
Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,857	1,857	-	-
Հաճախորդներին տրված վարկեր	923,586	923,586	-	-
	925,443	**925,443**	-	-

Հազար ՀՀ դրամ		Իրական արժեքի հիերարխիայի չափում		
Նկարագրություն	**31.12.2021**	**Մակարդակ 1**	**Մակարդակ 2**	**Մակարդակ 3**
Իրական արժեքով չափվող պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	456,446	-	456,446	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	3,433	3,433	-	-
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	35,410	-	-	35,410
	495,289	**3,433**	**456,446**	**35,410**

20.3 Կապիտալի կառավարում

Ընկերության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Ընկերությունը որպես կապիտալ սահմանում է տեղական օրենսդրությամբ վարկային կազմակերպությունների համար որպես բաղկացուցիչ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն՝ վարկային կազմակերպությունները, որոնք հիպոթեկային օֆերտայի միջոցով չեն ներգրավում փոխառություններ և չեն իրականացնում կանխիկ արտարժույթի գործառնություններ՝ բացառությամբ գործառնությունների, որոնք կապված են վարկերի մարումների ընդունման հետ, պետք է ապահովեն միայն 150,000 հազար դրամ գումարի չափով նվազագույն կանոնադրական և ընդհանուր կապիտալ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 150,000 հազար դրամ): 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ապահովում է նվազագույն կանոնադրական կապիտալի պահանջները: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն Կազմակերպության ընդհանուր կապիտալը կազմել է՝ 458,915 հազար դրամ (2021թ.-ին՝ 477,904 հազար դրամ): Տարվա ընթացքում կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Ընկերության մոտեցումը չի փոփոխվել: 2022 և 2021 թվականների ընթացքում Ընկերությունում վերոհիշյալ նորմատիվների գծով խախտումներ առկա չեն եղել:

21 Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե համապատասխան են դրանց իրական արժեքին:

Իրացվելիության դժվարությունների հետ կապված, ինչպես նաև Հայաստանի շուկայում հիպոպարակված «տոկոսադրույքի հայտանիշների» բացակայության պատճառով, և ելնելով այն փաստից, որ Ընկերության գործարքների մի մասն իրականացվել է կապակցված կողմերի հետ և առանձնահատուկ բնույթի է՝ իրատեսական չէ որոշել ստացված փոխառությունների իրական արժեքները:

22 Պայմանականություններ

22.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

22.2 Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունները, եթե այդպիսիք լինեն, զգալի բացասական ազդեցություն չեն ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

Ղեկավարությունը տեղյակ չէ Ընկերության դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

22.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

22.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Շրջակա միջավայրը, որտեղ Ընկերությունը գործում է, չի պահանջում, որպեսզի Ընկերությունը ներկայացնի շրջակա միջավայրի վրա իր ունեցած ազդեցության տարեկան հաշվետվություն կամ համանման զեկույց: Ղեկավարության համոզմամբ՝ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

23 Գործարքներ կապակցված կողմերի միջև

Ընկերության կապակցված կողմերը ներառում են Ընկերության բաժնետերերին, հիմնական ղեկավար անձնակազմին և նրանց հետ կապակցված կազմակերպությունները:

23.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է Վարդան Վարդանյանի կողմից, որին պատկանում է Ընկերության բաժնետոմսերի 100%-ը:

23.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են 2021թ. դեկտեմբերի 31-ին և նույն ժամանակաշրջանում ավարտված տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացված գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները.

Ստացված փոխառություններ (հաշվեկշռային արժեքով)

Հազար ՀՀ դրամ	31.12.2022թ.	31.12.2021թ.
100% բաժնետեր Վարդան Վարդանյան	195,665	297,935
	195,665	**297,935**

23.3 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության խորհրդի նախագահը հանդիսանում է Ընկերության 100 տոկոս բաժնետեր:

Ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է Շահույթի կամ վնասի և այլ հաստատուն ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ՝ «Անձնակազմի գծով ծախսեր» տողում.

Հազար ՀՀ դրամ	31.12.2022թ.	31.12.2021թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ՝ ներառյալ սոցիալական ապահովության վճարները	21,861	25,021
	21,861	**25,021**

Գործադիր տնօրեն՝ **Բագրատ Մուշեղյան**

Գլխավոր հաշվապահ՝ **Վահե Գրիգորյան**